600.0126.02.05.19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մայիսի 2019 թվականի №126Ա

քաղ. Երևան

## «ԼՈՒՍ-ՄԻԼԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԼՈՒՍ-ՄԻԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի ապրիլի 17-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ԼՈՒՍ-ՄԻԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 150.975ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով:
2. Հաստատել «ԼՈՒՍ-ՄԻԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 150.975ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ԼՈՒՍ-ՄԻԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական

բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
2 մայիսի 2019թ.